

ՀԱՅՏՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է արտաքին մրցույթ՝ Նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.4-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Արտաքին մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.4-Մ2-4) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.4-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմումները ներկայացնում են **Էլեկտրոնային տարբերակով՝** քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ <https://cso.gov.am/> միջոցով: Էլեկտրոնային եղ անակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել <https://cso.gov.am/> կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին:

Ծանոթանալով Թեստավորման մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղծի օգնությամբ ներկայացնել Էլեկտրոնային դիմում: Սեղմելով «Դիմել» ստեղծը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որ տեղ անհրաժեշտ է լրացնել վավեր Էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում «Իմ էջը» բաժնում («Ծանուցումներ»

զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ»,

«Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել» կոճակը:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացվում են քանչորսժամյա ռեժիմով:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.4-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող

թեստավորման մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» կոճակով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2

(երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի»

«Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի»

«Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված 2 նշանը:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով <https://hartak.cso.gov.am/> հղումի «ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

ՀՀ քաղաքացիները թեստավորմանը ներկայանում են անձնագրով և/կամ նույնականացման քարտով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (զինվորական գրքույկ, ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.4-Մ2-4) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում.
2. անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճենը.
3. դիպլոմ (ներ)ի լուսապատճեն (ներ)ը.
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ (եր)ի լուսապատճեն (ներ)ը.
5. արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի) լուսապատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի լուսապատճենը.
6. մեկ լուսանկար՝ 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի ապրիլի 30-ի ժամը՝ 9:00-ից մինչև 2021 թվականի մայիսի 6-ը՝ ժամը 24:00-ը: Դիմումներն ընդունվում են քսանչորսժամյա ռեժիմով:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի հունիսի 9-ին՝ ժամը 15:00-ին, Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տերյան 89, հարկ 2-րդ, դահլիճ 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի հունիսի 11-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ, դահլիճ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 5,6, 34,180,181,182,183,184,185,189
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
 - «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2,3,4,5, 6,7,10, 22,23,32.34,35
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131562>
 - «<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենք, հոդվածներ՝ 3,4,13,14,16,17,18,20
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137604>
 - «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 4, 6, 8, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 29, 33, 82, 95, 96, 97,98
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134780>
 - «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5,9,13,15,22,23,26,27,29,42,45,86, 87,88
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134776>
 - «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք
հոդվածներ՝ 3, 5, 7,12
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137135>
 - «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 15, 20, 30, 35, 50, 52
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>
 - «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 30, 37
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>
 - Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղաջյան: Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99
հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>
 - «<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, Երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114, 124-126,134,137,142,147-148,198-201
հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>
- Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես՝
- «<Հաշվետվությունների մշակում>> կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf
 - «<Խնդրի լուծում>> կոմպետենցիա, հղումը՝
https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- <<Բարեվարքություն>> կոմպենսացիա
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, 010-511-318, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային
(կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության
կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ**

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝
Նախարարություն) տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների
կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կոշտ կենցաղային թափոնների
կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Մասնագետ)
(ծածկագիրը՝ 22-33.4-Մ2-4):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր
մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Իրականացնում է ՀՀ բնակավայրերում միջազգային նորմերին համապատասխան կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի ներդրմանն ուղղված առաջարկությունների մշակումը.
2. Իրականացնում է հանրապետության տարածքում աղբահանության սխեմաների մշակման և կոշտ կենցաղային թափոնների կառավարման արդյունավետ համակարգի ներդրման աշխատանքները.
3. Իրականացնում է կոշտ կենցաղային թափոնների վերամշակման համակարգի ներդրմանն ուղղությամբ աշխատանքները և իրականացնում է այդ ուղղությամբ միջազգային կառույցների հետ համագործակցությունը.
4. Իրականացնում է հանրապետությունում պարբերաբար իրականացվող համապետական մաքրության օրերի կազմակերպչական աշխատանքները.
5. Իրականացնում է տարածքներում միջազգային նորմերին համապատասխան աղբավայրերի և վերամշակման գործարանների ստեղծմանն ու շահագործմանն ուղղված ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքները.
6. Իրականացնում է միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հանրապետության տարածքներում իրականացվող կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավմանն ուղղված ծրագրերի աջակցության աշխատանքները.
7. Իրականացնում է հանրապետության բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բարելավման և մասնագիտացված կազմակերպությունների ներգրավմանն ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
8. մշակում է կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանն

ուղղված իրավական ակտերի նախագծեր, իրականացնում է դրանց սահմանված կարգով համաձայնեցումը իրավասու մարմինների հետ, ինչպես նաև Նախարարության կարծիքին կամ համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի մասին համապատասխան առաջարկությունների նախապատրաստումը.

9. Իրականացնում է մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և կյուբերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

10. իրականացնում է ՀՀ-ում տարածքային աճի բևեռների ձևավորման հետ կապված աշխատանքները.

11. իրականացնում է Նախարարության՝ ՀՀ համաչափ տարածքային զարգացմանը միտված հարթակի աշխատանքները.

Իրավունքները՝

- Միջազգային նորմերին համապատասխան կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի՝ ՀՀ բնակավայրերում ներդրմանն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում.
- Կոշտ կենցաղային թափոնների կառավարման արդյունավետ համակարգի ներդրման և հանրապետության տարածքում աղբահանության սխեմաների մշակման աշխատանքների իրականացման նպատակով պահանջել լրացուցիչ տվյալներ.
- կոշտ կենցաղային թափոնների վերամշակման համակարգի ներդրման և այդ ուղղությամբ միջազգային կառույցների հետ համագործակցության իրականացման նպատակով հանդիպումների կազմակերպման աշխատանքներին մասնակցություն.
- ՀՀ մարզերից մաքրության օրերի համար անհրաժեշտ ռեսուրսների և գործիքակազմի վերաբերյալ պահանջել լրացուցիչ տեղեկատվություն.
- Վերամշակող գործարանների ստեղծմանն ուղղված ներկայացված ծրագրերի վերաբերյալ հավելյալ տեղեկատվության ստացում.
- միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հանրապետության տարածքներում իրականացվող կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավմանն ուղղված ծրագրերի աջակցության նպատակով քննարկումների կազմակերպման համար պահանջել լրացուցիչ տեղեկատվություն.
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բարելավման և մասնագիտացված կազմակերպությունների ներգրավմանն ուղղությամբ լրացուցիչ տեղեկատվության ստացում.
- ՀՀ-ում տարածքային աճի բևեռների ձևավորման աշխատանքների իրականացման նպատակով աշխատանքային խմբում ընդգրկված գերատեսչությունների և կազմակերպությունների հետ քննարկումների կազմակերպում.
- ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակի աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ մարզերից ներդրումային ծրագրերի ստացում, պետության կողմից իրականացվող՝ մարզերի և համայնքների սոցիալ տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում.
- համապատասխան պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցության համար, ինչպես նաև պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից անհրաժեշտ տեղեկատվության և կյուբերի ստացում, քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցություն:

Պարտականությունները՝

- միջազգային նորմերին համապատասխան կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի՝ ՀՀ բնակավայրերում ներդրմանն ուղղված առաջարկությունների մշակման

աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ-ում գործող օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն.

- կոշտ կենցաղային թափոնների կառավարման և հանրապետության տարածքում աղբահանության սխեմաների մշակման և արդյունավետ համակարգի ներդրման աշխատանքների իրականացման նպատակով ստացված տեղեկատվության ամփոփում և վերլուծություն.
- կոշտ կենցաղային թափոնների վերամշակման համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացման նպատակով միջազգային կառույցների հետ համագործակցության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, հանդիպումներին մասնակցություն, քննարկման արդյունքների ամփոփում.
- հանրապետությունում պարբերաբար իրականացվող համապետական մաքրության օրերի նախապատման նպատակով անհրաժեշտ տվյալների ստացում և ամփոփում.
- միջազգային նորմերին համապատասխան աղբավայրերի և վերամշակման գործարանների ստեղծմանն ու շահագործմանն ուղղված ծրագրերի ուսումնասիրություն, համեմատական վերլուծություն և առաջարկությունների ներկայացում.
- կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀՀ-ում գործող օրենսդրության հետ համադրում:
- հանրապետության բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բարելավման և մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման աշխատանքների իրականացման նպատակով տեղեկատվության ամփոփում և առաջարկության ներկայացում.
- մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաթեթների և նյութերի ուսումնասիրություն, ամփոփում և փորձաքննության ուղարկելու համար առաջարկությունների ներկայացում.
- ՀՀ-ում տարածքային աճի բևեռների ձևավորման նպատակով աշխատանքային խմբի նիստերի աշխատանքների արդյունքների ամփոփում, համապատասխան առաջարկների ներկայացում և ծրագրերի մշակում.
- ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակի աշխատանքների իրականացման նպատակով պետության կողմից իրականացվող՝ մարզերի և համայնքների սոցիալ տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի ներկայացում, հարթակում տեղադրում, կայքի պարբերական թարմացման աշխատանքների իրականացում.
- Իրավական ակտերի, տեղեկանքների, զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների, եզրակացությունների և այլ գրությունների նախապատրաստում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի կամ ճարտարագիտության կամ սոցիալ-տնտեսական բնագավառում ուսումնասիրությունների և (կամ) հետազոտությունների և (կամ) մշտադիտարկումների և (կամ) վերլուծությունների իրականացման՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում

2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարելավություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: